



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

### Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

#### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 8-րդ մասի՝ Սահմանադրական դատարանի 2018 թվականի հուլիսի 9-ի ՍԴԱՈ-1-Ն որոշմամբ ընդունված աշխատակարգում կատարել հետևյալ լրացումները.

1. Սահմանադրական դատարանի աշխատակարգը 180-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր կետերով.

«180.1. Սահմանադրական արդարադատության ոլորտում, ինչպես նաև ժողովրդավարական և իրավական պետության ամրապնդման գործում նշանակալի ավանդի, նվիրումի համար Սահմանադրական դատարանի նախագահը՝ խորհրդակցելով Սահմանադրական դատարանի դատավորների հետ, կարող է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անձանց պարգևատրել Սահմանադրական դատարանի մեդալով: Սահմանադրական դատարանի մեդալի հետ միաժամանակ տրվում է նաև մեդալի վկայական:

180.2. Սահմանադրական դատարանի մեդալի և դրա վկայականի նկարագրությունը սահմանվում է սույն աշխատակարգի 4-րդ հավելվածով»:

2. Սույն աշխատակարգը լրացնել 4-րդ հավելվածով՝ համաձայն հավելվածի:

## **Հավելված**

Սահմանադրական դատարանի 2019 թվականի դեկտեմբերի 20-ի  
ՍԴԱՌ-168 աշխատակարգային որոշման

### **«Հավելված 4**


Սահմանադրական դատարանի 2018 թվականի հուլիսի 9-ի ՍԴԱՌ-1-Ն  
որոշմամբ ընդունված Սահմանադրական դատարանի աշխատակարգի

### **Սահմանադրական դատարանի մեդալի և դրա վկայականի նկարագրությունը**

1. Սահմանադրական դատարանի մեդալը (այսուհետ՝ մեդալ) բաղկացած է 2 մասից՝ կախիչից և սկավառակից: Սկավառակը կապողակների միջոցով կապվում է կախիչին:
2. Կախիչը պատրաստված է թեթև մետաղից և ունի հնգակողմ բազմանկյան ձև՝ պաստառապատված Հայաստանի Հանրապետության դրոշը խորհրդանշող կարմիր, կապույտ, նարնջագույն հավասար հորիզոնական շերտեր ունեցող ժապավենով:
3. Մեդալի սկավառակի տրամագիծը 35 մմ է, կենտրոնում պատկերված է արդարադատության խորհրդանիշ Ֆեմիդա Թեմիսը՝ ժապավենով փակված աչքերով (որպես անաչառության խորհրդանիշ), մի ձեռքին՝ կշեռք, մյուսին՝ Սահմանադրություն: Սկավառակի վերևի մասում առկա է «ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ» մակագրությունը, իսկ հակառակ երեսին նշվում է «THE CONSTITUTIONAL COURT OF THE REPUBLIC OF ARMENIA» մակագրությունը, մակագրության տակ՝ մեդալի համարը:
4. Սկավառակը պատրաստված է արույրի համաձուլվածքից, ոսկեպատ է, արտադրվում է դրոշմման եղանակով:
5. Հորեյանական մեդալի սկավառակի տրամագիծը 32 մմ է, ունի սույն հավելվածի 3-րդ կետով սահմանված նկարագիրը՝ Ֆեմիդա Թեմիսի պատկերի կողքին պարունակելով նաև հորեյանը խորհրդանշող թիվ, իսկ թվի ներքևի հատվածում՝ ձիթենու ճյուղ:
6. Մեդալների վկայականները բացված վիճակում ունեն 140 մմ լայնություն և 200 մմ երկարություն: Վկայականի ներդիրները երկլեզու են՝ հայերեն և անգլերեն, և լրացվում են՝ հիմք ընդունելով համապատասխան մեդալի տվյալները»:


ՁեՎ N 1

Սահմանադրական դատարանի մեդալի



ՁեՎ N 2

Սահմանադրական դատարանի հորեղյանական մեդալի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ**



**ՄԵԴԱԼԻ ՎԿԱՅԱԿԱՆ**

**Սահմանադրական դատարանի  
նախագահի**

----- կարգադրությամբ


-----

-----

-----

պարզևատրվել է

----- մեղալով



**Մեղալի  
բնօրինակի  
պատկերը**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՄԵԴԱԼ**

Մեղալ՝ -----

Սահմանադրական դատարանի  
աշխատակազմի ղեկավար

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՀ**

20 դեկտեմբերի 2019 թվականի  
ՍԴԱՌ-168



**Հ.ԹՈՎՄԱՍՅԱՆ**